ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«17» մարտի 2017թ

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի պետի տեղակալ

_____ Հ. Այունց

ԳԲԽ-25/17 բողոքը քննող

հանձնաժողովին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ Կենտրոն) կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Խաչպար» ՍՊԸ-ի 28.02.2017թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. «Խաչպար» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Խաչպար» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 28.02.2017թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ «Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ի կողմից (այսուհետ նաև՝ Պատվիրատու) «Բժշկական պարագաների» ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-17/19» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Պատվիրատուն հրավերի Հավելված թիվ 6՝ «Ապրանքների մատակարարման գնման պայմանագիր»-ի տեխնիկական բնութագրի հավելվածում խմբավորել է նաև գնման և վճարման պայմանները:

Բողոքով նշվել է նաև, որ Պատվիրատուն հրավերի Հավելված թիվ 6՝ «Ապրանքների մատակարարման գնման պայմանագիր»-ի հավելվածների հաստատված քանակների, անվանումների ու թվակալումների հետ կատարել է այնպիսի փոփոխություններ, որոնք բացարձակապես չեն համապատասխանում ինչպես ՀՀ ֆինանսների նախարարության 02/08/2013 թ. թիվ 667-Ա հրամանով սահմանված և ՀՀ ֆինանսների նախարարության 20/07/2016 թ. թիվ 605-Ա հրամանով վերահաստատված՝ օրինակելի ձևերին, այնպես էլ ՀՀ ֆինանսների նախարարության 02/08/2013թ. թիվ 667-Ա հրամանի թիվ 2 կետով թույլատրված՝ փոփոխություններ կատարելու սահմանումներին, քանի որ Պատվիրատուն փոփոխություններ է կատարել ոչ թե փաստաթղթերում՝ այլ նրանց քանակների, անվանումների ու թվակալումների հետ:

«Խաչպար» ՍՊԸ-ն գտնում որ Պատվիրատուն խախտել է «Գնումների մասին» ՀՀ Օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, 4-րդ հոդվածի 3-րդ մասի, 4-րդ մասի 7-րդ կետի և 5-րդ մասի 1-ին կետի և ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» (այսուհետ նաև՝ Կարգ) 1-ին և 2-րդ կետերի սահմանմանումների պայմանները:

Ընկերությունը խնդրել է կասեցնել «Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ի կարիքների համար «Բժշկական պարագաների ձեռքբերման» նպատակով հայտարարված «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-17/19» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգը, Պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի կայացրած որևէ որոշման իրականացումը (այդ թվում նաև պայմանագրի կնքման գործընթացը), քանի որ ընթացակարգը շարունակելու դեպքում «Խաչպար» ՍՊԸ-ն կարող է կրել վնասներ, իսկ բողոքը բավարարելու դեպքում կարող է առաջացնել անհարկի խոչընդոտներ ընթացակարգի հետագա շարունակությունն, ինչպես նաև խնդրել է դադարեցնել «Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ի կարիքների համար «Բժշկական պարագաների ձեռքբերման» նպատակով հայտարարված «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-17/19» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու հրավեր հայտարարելու մասին 2017թ. փետրվարի 24-ի թիվ 1 որոշումը:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 06.03.2017թ. ժամը 17:00-ին և 16.03.2017թ. ժամը 16:00-ին ԳԲԽ-25/17 բողոքի շրջանակներում տեղի ունեցած քննարկումների ժամանակ «Խաչպար» ՍՊԸ-ի տնօրենը պնդել է բողոքով ներկայացրած դիրքորոշումը:

Ընկերությունը տեղեկացրել է, որ 20.10.2016թ. գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարություն և հայտնել, որ «Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ի կողմից գնման ընթացակարգերի արդյունքում հաճախ չեն պահպանվում գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջները, մասնավորապես «Գնումների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածով սահմանված պահանջները՝ սահմանելով ոչ հստակ և/կամ խտրական գնման և վճարման պայմաններ:

Ի պատասխան Ընկերության վերոնշյալ հարցման՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը 10.11.2016թ. թիվ 03/73-1/25295 գրությամբ դիմել է Երևանի քաղաքապետարանին՝ առաջարկելով ձեռնարկել միջոցներ՝ «Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ի կողմից հիշյալ նորմերով սահմանված պահանջների պահպանման, ինչպես նաև գնման հրավերները ՀՀ ֆինանսների նախարարի 02.08.2013թ. թիվ 667-Ա հրամանով հաստատված օրինակելի ձևերին համապատասխան կազմելու համար՝ հրավերներում ներառելով գնման և վճարման ժամանակացույցերը:

<u>2. «Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը</u>

Կենտրոնը 01.03.2017թ. Պատվիրատուին ուղղարկված գրությամբ խնդրել էր եռօրյա ժամկետում տալ կարծիք «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-17/19» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնման ընթացակարգի վերաբերյալ:

Պատվիրատուն 03.03.2017թ. թիվ 08-53 գրությամբ պատասխանել է Կենտրոնի 01.03.2017թ. գրությանը, հղում անելով իրենց նախկին 22.11.2016թ. թիվ 08-377 գրությանը:

«Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 06.03.2017թ. ժամը 17:00-ին նշանակված նիստի օրվա, տեղի և

ժամի մասին, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը, սակայն ի լրումն 03.03.2017թ. թիվ 08-53 գրության՝ ներկայացրել է 06.03.2017թ. թիվ 08-59 գրությունը:

Վերոհիշյալ գրությամբ Պատվիրատուն հայտնել է, որ Հրավերի օրինակելի ձևերով սահմանված թիվ 1 հավելվածը՝ տեխնիկական բնութագիրը, թիվ 2 հավելվածը՝ գնման ժամանակացույցը և թիվ 3 հավելվածը՝ վճարման ժամանակացույցը, Պատվիրատուի հրավերներում ընդհանրացված են թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր՝ գնման ժամանակացույցով, գնման ժամանակացույցում ապրանքի մատակարարման քանակների կոնկրետ բաշխվածք աղուսյակային տեսքով չկա, այլ առկա է որոշակի ժամկետում մատակարարման պահանջ՝ ելնելով գնման առարկայի առանձնահատկություններից, վճարման ժամանակացույցի բաշխվածք ըստ ամիսների չկա և նույնպես առկա է Վճարման ժամկետի տիրույթ՝ Ապրանքը ընդունելու օրվանից հաշվարկվող:

Պատվիրատուն պարզաբանել այս հարցերը.

- ՀՀ ֆինանսների նախարարի 02.08.2013թ. «Գնումների գործընթացում օգտագործվող փաստաթղթերի օրինակելի ձևերը հաստատելու մասին» թիվ 667-Ա հրամանի 2-րդ կետով սահմանված է, որ սույն հրամանի 1-ին կետի ենթակետերով հաստատվող փաստաթղթերի կիրառման ժամանակ պատվիրատուների կողմից դրանցում կարող են կատարվել փոփոխություններ, որոնք չեն կարող հակասել «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված նպատակներին և սկզբունքներին:

- «Գնումների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի համաձայն՝ «Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռքբերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով այլընտրանքային մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:» , մինչդեռ օրինակելի ձևի մեջ ներառված թիվ մեկ հավելվածում՝ տեխնիկական բնութագրում, բացակայում են և ձեռքբերման, և վճարման պայմանները, և պայմանագրի գինը:

- ՀՀ գնումների մասին օրենսդրությամբ, ինչպես նաև պայմանագրում նախատեսված է դրույթ, համաձայն որի մինչև սահմանված ժամկետում պայմանագրի կնքելը «կողմերի համաձայնությամբ, կարող են պայմանագրի նախագծում կատարվել փոփոխություններ, սակայն դրանք չեն կարող հանգեցնել գնման առարկայի բնութագրերի

փոփոխմանը, ներառյալ՝ ընտրված մասնակցի առաջարկած գնի ավելացմանը: Այսինքն, եթե գնման և վճարման ժամանակացույցերը չներառվեն տեխնիկական բնութագրերում, ապա դրանք հեշտությամբ կարելի է փոփոխել պայմանագիրը կնքելուց, ինչը, մեր կարծիքով, հղի է չարաշահումների ռիսկով:

- Գնումների տեղեկագրում հրապարակված են նաև ծառայությունների ձեռքբերման հրավերներ, որտեղ գնման ժամանակացույցը ներառված է թիվ մեկ հավելվածում՝ տեխնիկական բնութագրում: Փաստորեն ՀՀ ֆինանսներ նախարարությունը արդեն իսկ կատարել է նույն գնման ձևով տարբեր հրավերներում օրինակելի ձևերի փոփոխություններ:

- Բոլոր հրավերներում հայտը պատրաստելու հրահանգում ներառված է դրույթ, համաձայն որի, «Նպատակահարմարության դեպքում Մասնակիցը պահանջվող տեղեկությունները կարող է ներկայացնել սույն հրահանգով առաջարկվող ձևերից տարբերվող այլ ձևերով՝ պահպանելով պահանջվող վավերապայմանները» : Եթե մասնակցին թույլատրվում է շեղվել հրավերի օրինակելի ձևանմուշից, ապա ինչպես կարող է դա արգելվել Պատվիրատուին:

- «Օրինակելի ձև» արտահայտությունը չի ենթադրում ձևանմուշից շեղվելու անհնարինություն, հակառակ դեպքում այն կկոչվեր «պարտադիր ձևանմուշ» կամ նման մի բան: Ցանկացած օրինակելի ձևում պարտադիր պայման է հանդիսանում բովանդակային պահանջների պահպանումը:

- Բժշկական ծառայություններ մատուցող ընկերություններում ապրանքների սպառումները ուղղակիորեն կապված են հիվանդների այցելությունների քանակներից, նրանց առողջական իրավիճակից տվյալ պահին: Այս ցուցանիշները բավականին փոփոխական են և դրանցով պայմանավորված Պատվիրատուների մոտ առաջանում են փաստացի կարիքի փոփոխություններ: Գնման ժամանակացույցով կոնկրետ ամսում կամ եռանսյակում ապրանքի կոնկրետ քանակ նախատեսելու դեպքում Պատվիրատուն պարտավորություն է ստանձնում ամբողջությամբ ձեռքբերել նախատեսված քանակը նախատեսված ժամկետում և վճարել դրա դիմաց: Արդյունքում ստացվում է մի իրավիճակ, որ պատվիրատուն ձեռք է բերում Ապրանքի ոչ հարկավոր քանակ: Առաջանում է նաև ժամկետնանց ապրանքներ ունենալու հավանականությունը: Արդյունքում Պատվիրատուի ֆինանսական միջոցները բաշխվում են ոչ արդյունավետ: Այս և այլ հարցերի

կարգավորման նպատակով ՀՀ առողջապահության նախարարությունը 22/07/2016թ. թիվ ԱՄ/06.1/8130-16 գրությամբ պաշտոնապես դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը և ստացել պարզաբանում: Պատասխան պարզաբանման մեջ, որը ըստ էության հանդիսանում է մեթոդական ցուցում, առկա է հետևյալ մոտեցումը. «հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ դեպքում Գրության մեջ նշված գնման առարկաների մասով տարվա ընթացքում առկա է լինում փաստացի կարիքի փոփոխություն, առաջարկում ենք այդ գնման առարկաների գնման գործընթացը կազմակերպել դրանց համար գնումների պլանով հաստատված /կամ գնումների պլանում համապատասխան գումարը ներառելիս դրա հաշվարկի հիմքում ընկած/ ամբողջ քանակի համար՝ հրավերով նախատեսելով, որ մասնակիցները պետք է գնային առաջարկը ներկայացնեն այդ խմբաքանակի համար, իսկ գնման առարկաները փաստացի կմատակարարվեն՝ ըստ պատվիրատուի կողմից ներկայացվող պահանջի:»: Այսինքն, գնման ժամանակացույցով բաշխվածք չներկայացնելը և սահմանված ընդհանուր տարեկան քանակի շրջանակներում ըստ պատվիրատուի պահանջի մատակարարումներ իրականացնելը իրավաչափ է, կարգավորված է հենց ՀՀ ֆինանսների նախարարության կողմից և բխում է Պատվիրատուների շահերից:

- Առկա են բազմաթիվ դեպքեր, երբ բողոքարկումների արդյունքում պայմանագիրը կնքվում է ավելի ուշ, քան մատակարարման պահանջն է: Հենց նմանատիպ դեպք է «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/18» ծածկագրով գնման ընթացակարգը, որը բազմիցս բողոքարկվել է «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից: Այդ բողոքարկումների արդյունքում մայիսին հայտարարված ընթացակարգի շրջանակներում պայմանագրեր են կնքվել հունիս, հուլիս, օգոստոս և հոկտեմբեր ամիսներին: Ինչպես պետք է վարվեր պատվիրատուն այս դեպքում, եթե ժամանակացույցը լիներ ըստ ամիսների սահմանված քանակներով և օրինակ հունիս ամսում լիներ մատակարարման ենթակա քանակի պահանջ: Փաստացի փոփոխվում է նաև օգոստոսին կամ հոկտեմբերին կնքված պայմանագրերի շրջանակներում անհրաժեշտ մատակարարվող քանակները: Նմանատիպ դեպքեր համակարգում բազմաթիվ են և պատվիրատուները կոնկրետ բաշխվածքով ժամանակացույց սահմանելու պարագայում կկանգնեն անելանելի իրավիճակի առաջ:

- Օրենքի 3-րդ հոդվածի համաձայն Օրենքի նպատակներից է «պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ **<u>կարիքին</u>**

համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.»: Սակայն Օրենքում չկա մի դրույթ, որով Մասնակցի շահը գերադասվի Պատվիրատուի կարիքին, ուստի Ձեռքբերման հիմքում պետք է դնել Պատվիրատուի փաստացի կարիքը:

- «Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից ապրանքների ձեռքբերումների համար ֆինանսավորման աղբյուրը ոչ թե պետական բյուջեն է, այլ ծախսերի և եկամուտների նախահաշիվը, որը չունի ամսեկան կամ եռամսյակային համամասնությունների բացվածք: Ձեռքբերումների համար անհրաժեշտ Ֆինանսական միջոցները գոյանում են մատուցված բժշկական ծառայությունների դիմաց գանձված գումարներից: Ապրանքների ձեռքբերումից, մինչև դրա ծախսմամբ մատուցված ծառայության դիմաց գումարների գանձումը ընկած ժամանակահատվածը տատանվում է օրերից մինչև նույնիսկ տարի՝ հաշվի առնելով միջամտությունների առանձնահատկությունները: Ուստի Պատվիրատուն վճարման պայմանի ցուցանիշը սահմանում է իր վճարողունակությունը ամփոփ դիտարկելով: Պատվիրատուն վճարման պայմանը սահմանելով 60 օրվա ընթացքում, ցուցաբերել է միասնական մոտեցում բոլոր հնարավոր մասնակիցների հանդեպ՝ առանց բացառությունների և դա չի հակասում Օրենքի 3-րդ հոդվածով սահմանված սկզբունքներին: Գնումների համակարգում առկա են բազմաթիվ դեպքեր, երբ օրինակ պետ բյուջեի հաշվին Ապրանքի ձեռքբերումը նախատեսված է I-II եռամսյակներ, վճարումը՝ III-IV:

Ըստ Պատվիրատուի՝ խնդրի առարկա հանդիսացող փոփոխությունները, որոնք կատարել է Պատվիրատուն իր կողմից կազմակերպվող գնման ընթացակարգերի հրավերներում ոչ միայն չեն հակասում ՀՀ գնումների մասին օրենսդրության պահանջներին, այլ նաև ավելի են մոտենում Օրենքի ուղղակի մեկնաբանմանը:

16.03.2017թ. ժամը 16:00-ին ԳԲԽ-25/17 բողոքի շրջանակներում տեղի ունեցած լրացուցիչ քննարկմանը ներկայացել է «Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ի լիազորված ներկայացուցիչը և պնդել է «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-17/19» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնման ընթացակարգի գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համապատասխան լինելու փաստը:

3. ԳԲԽ-25/17 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-25/17 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ի կարիքների համար բժշկական պարագաների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-17/19» ծածկագրով գնման ընթացակարգ:

2. Ընթացակարգի հրավերի թիվ 6 հավելվածով՝ «Ապրանքների մատակարարման գնման պայմանագիր»-ի անբաժանելի մաս հանդիսացող թիվ 1 հավելվածով նախատեսված՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով գնման և վճարման պայմանները խմբավորված են մեկ հավելվածում:

3. «Խաչպար» ՍՊԸ-ն 20.10.2016թ. գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարություն և հայտնել, որ «Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ի կողմից գնման գործընթացի շրջանակներում հաճախ չեն պահպանվում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածով սահմանված պահանջները:

4. Ի պատասխան «Խաչպար» ՍՊԸ-ի վերոհիշյալ գրության՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը 10.11.2016թ. թիվ 03/73-1/25295 գրությամբ դիմել է Երևանի քաղաքապետարանին՝ առաջարկելով ձեռնարկել միջոցներ՝ «Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ի կողմից հիշյալ նորմերով սահմանված պահանջների պահպանման, ինչպես նաև գնման հրավերները ՀՀ ֆինանսների նախարարի 02.08.2013թ. թիվ 667-Ա հրամանով հաստատված օրինակելի ձևերին համապատասխան կազմելու համար՝ հրավերներում ներառելով ***գնման և վճարման ժամանակացույցերը***:

4. ԳԲԽ-25/17 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը.

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Խաչպար» ՍՊԸ-ի 28.02.2017թ. ներկայացրած բողոքը և կից

փաստաթղթերը, Ըկերության 20.10.2016թ. ՀՀ ֆինանսների նախարարություն կատարված հարցումը, ՀՀ ֆինանսների նախարարության 10.11.2016թ. թիվ 03/73-1/25295 պատասխան գրությունը, «Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ի կողմից ներկայացված 03.03.2017թ. թիվ 08-53 և 03.03.2017թ. թիվ 08-53 գրությունները, «Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ի «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-17/19» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնման ընթացակարգի հրավերը (այսուհետև նաև՝ Հրավեր), գտնում է, որ «Խաչպար» ՍՊԸ-ի 28.02.2017թ. ներկայացրած բողոքը ենթակա է բավարարման հետևյալ պատճառաբանությամբ.

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ նույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝ պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ, գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված նպատակի իրագործման համար, գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա՝

- գնման գործընթացի միասնական կանոններով, մրցակցային, թափանցիկ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.
- պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.
- ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ նույն օրենքի նպատակի և պահանջների կատարման ապահովման համար Հայաստանի Հանրապետության կառավարությունը և լիազորված մարմինն ընդունում են գնումների մասին իրավական այլ ակտեր: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև տեղեկագրում:

Նույն հոդվածի 4-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը հաստատում է՝ հրավերի և պայմանագրի հիմնական պայմանները, իսկ 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ ***լիազորված մարմինը հաստատում է՝ գնումների գործընթացում օգտագործվող փաստաթղթերի, ներառյալ հրավերի և պայմանագրի օրինակելի ձևերը:***

Կարգի 1-ին կետի համաձայն՝ նույն կարգով կարգավորվում են «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված՝ գնումների պլանավորման, գնման առարկայի բնութագրերի հաստատման, գնումների նախնական հսկողության և ֆինանսավորման, գնահատող հանձնաժողովի կազմավորման և գործունեության, օրենքով նախատեսված գնում կատարելու ընթացակարգերի կիրարկման, գնումների բողոքարկման խորհրդի անդամների՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության իմացության գնահատման, վարձատրության չափի և կարգի սահմանման գործընթացի հետ կապված հարաբերությունները, ինչպես նաև սահմանվում են հրավերի և պայմանագրի հիմնական պայմանները:

Կարգի 2-րդ կետի համաձայն՝ նույն կարգով հրավերին և պայմանագրին ներկայացվող պայմանները հանդիսանում են հրավերի և պայմանագրի հիմնական պայմանները: Հրավերում և պայմանագրում հիմնական պայմանների ներառման, ինչպես նաև գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ պատվիրատուների համար սահմանված պահանջների կատարման պատասխանատվությունը կրում է պատվիրատուն: Ընդ որում, գնման գործընթաց կազմակերպելիս պատվիրատուներն առաջնորդվում են լիազոր մարմնի սահմանած հրավերի և պայմանագրի օրինակելի ձևերով:

ՀՀ ֆինանսների նախարարության 02.08.2013թ. թիվ 667-Ա հրամանով հաստատված են գնման ընթացակարգերում կիրառվող փաստաթղթերի օրինակելի ձևերը: Ըստ վերոհիշյալ հրամանի՝ հրավերի թիվ 6 հավելվածով՝ «Ապրանքների մատակարարման գնման պայմանագիր»-ի անբաժանելի մաս հանդիսացող հավելվածներով նախատեսված են՝ թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիրը, թիվ 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցը, թիվ 3 հավելվածով՝ վճարման ժամանակացույցը:

ՀՀ ֆինանսների նախարարությանը 10.11.2016թ. թիվ 03/73-1/25295 գրությամբ դիմել է Երևանի քաղաքապետարանին և առաջարկել է ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ

«Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ի կողմից հիշյալ գնման հրավերները ՀՀ ֆինանսների նախարարի 02.08.2013թ. թիվ 667-Ա հրամանով հաստատված օրինակելի ձևերին համապատասխան կազմելու համար:

Նման պայմաններում Կենտրոնը գտնում է, որ «Խաչպար» ՍՊԸ-ի 28.02.2017թ. ներկայացրած բողոքը ենթակա է բավարարման, քանի որ 4-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը հաստատում է՝ ***հրավերի*** և պայմանագրի հիմնական պայմանները, իսկ 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ լիազորված մարմինը հաստատում է՝ ***գնումների գործընթացում օգտագործվող փաստաթղթերի, ներառյալ հրավերի*** և պայմանագրի օրինակելի ձևերը, իսկ տվյալ պարագայում Պատվիրատուի կողմից չեն պահպանվել ՀՀ ֆինանսների նախարարի 02.08.2013թ. թիվ 667-Ա հրամանով սահմանված պահանջները, որը չպահպանելու արդյունքում ՀՀ ֆինանսների նախարարությունը դիմել է «Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ի լիազոր մարմնին՝ Երևանի քաղաքապետարանին հորդորելով հանձնարարել Պատվիրատուին գնման ընթացակարգերի հրավերները կազմել վերոհիշյալ հրամանով նախատեսած օրինակելի ձևերին համապատասխան՝ հրավերում ներառելով ***գնման և վճարման ժամանակացույցերը***:

Ելնելով վերոգրյալից՝ Կենտրոնը առաջարկում է «Խաչպար» ՍՊԸ-ի 28.02.2017թ.-ի բավարարել՝ դադարեցնել «Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ի կարիքների համար «Բժշկական պարագաների ձեռքբերման» նպատակով հայտարարված «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-17/19» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու հրավեր հայտարարելու մասին 2017թ. փետրվարի 24-ի թիվ 1 որոշումը:

Գնումների աջակցման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝	Հ. Ենգոյան
Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի պետ՝	Ռ.Մկրտչյան
Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի գլխավոր մասնագետ՝ ԳԲԽ-25/17 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝	Ա.Մկրտչյան